Արեստակես Ս. Սիմավորյան[1]

Թուրքիայի ընդդիմադիր դաշտի վերադասավորումների և հնարավոր զարգացումների մասին (առ օգոստոսի վերջ, 2026 թ.)

Փորձագետի տեսակետ, 24.08.2026 թ.[2]

Թուրքիայի ներքաղաքական դաշտն օրըստօրե նմանվում է խորը և երկարատև դրամայի: Մի կողմից՝ պետական ապարատն իր հավակնոտ ենթակառուցվածքային նախագծերով և անվտանգային հռետորաբանության հաճախակի շեշտադրմամբ փորձում է խլացնել հասարակության շրջանում ծայրառած դժգոհության աղմուկը, ինչը մեծապես պայմանավորված է երկարատև ֆինանսական և տնտեսական ճգնաժամի կուտակված ազդեցությամբ, մյուս կողմից՝ 2026 թ. հուլիսի վերջին թուրքական քաղաքականության մեջ տեղի ունեցան երկու հակադիր զարգացումներ:

Առաջինը՝ գլխավոր ընդդիմադիր **Հանրապետական-ժողովրդական կուսակցության** (այսուհետ՝ ՀԺԿ) նախկին առաջնորդ Օզգյուր Օզելի գործողությունն էր, ով հուլիսի 24-ին ՀԺԿ-ի 90 այլ անդամների հետ միասին լքեց կուսակցությունը՝ ստեղծելով նոր կուսակցություն՝ «Յենի պարթիսի»-ն (բառացիորեն՝ «Նոր կուսակցություն»):

Երկրորդը՝ հուլիսի 29-ին «Ապագայի կուսակցության» փակման և քաղաքականությունից իր հեռանալու մասին նախկին վարչապետ և ԱԳՆ ղեկավար Ահմեդ Դավութօղլուի հայտարարությունն էր:

Այս երկու իրադարձությունները թուրքական ընդդիմադիր դաշտում կուտակված խորքային և համակարգային ճգնաժամի անմիջական հետևանքն էին: ՀԺԿ-ում պառակտման գործընթացը սկիզբ էր առել դեռևս 2023 թ. նախագահական և խորհրդարանական ընտրություններում ընդդիմության կրած պարտությունից հետո, երբ կուսակցության ներսում ձևավորվեց այսպես կոչված *«փոփոխության շարժման»* թևը՝ Օ. Օզելի և Ստամբուլի քաղաքապետ Է. Իմամօղլուի գլխավորությամբ: Չնայած 2024 թ. ՏԻՄ ընտրություններում արձանագրած հաջողություններին, կուսակցության ներքին կանոնադրական դրույթները և ղեկավարման մեխանիզմները չկարողացան հաշտեցնել պահպանողական-կենտրոնամետ, ՀԺԿ նախկին առաջնորդ Քեմալ Քըլըչդարօղլուի կողմնակիցներին և բարեփոխիչ լայն կոալիցիոն մոդելին հարող թևին:

---

[1] Արևելագետ, թուրքագետ: 2008–2019 թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամում որպես Հայագիտական կենտրոնի ղեկավար, 2014–2021 թթ.՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն»-ի գիտաշխատող: 2019–2021 թթ. աշխատել է ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վերլուծական ծառայության» բաժնում որպես ավագ փորձագետ: 2021–2022 թթ. «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի «Գիտահետազոտական աշխատանքների և միջազգային կապերի բաժնի» գլխավոր արխիվագետ: 100-ից ավելի գիտավերլուծական հոդվածների և 12 կոլեկտիվ մենագրության հեղինակ է:

[2] Հոդվածը խմբագրություն է փոխանցվել 24.08.2026 թ.-ին:

Ճգնաժամը վերջնականապես խորացավ դատական համակարգի միջամտությամբ: Անկարայի տարածաշրջանային վերաքննիչ դատարանի՝ ՀԺԿ 38-րդ հերթական համագումարի որոշումներն *«անվավեր»* ճանաչելու վերաբերյալ վճիռն իրավական անորոշության մեջ դրեց Օզելի կուսակցության ղեկավարի լեգիտիմությունը: ՀԺԿ-ի ներսում երկխոսությունն ու որոշումների կայացումը հայտնվեցին փակուղում երկու հիմնական պատճառով. մի կողմից՝ առկա էր իրավական սպառնալիք, որ դատարանի որոշմամբ կուսակցության ղեկավարումը կարող է վերադարձվել նախկին կուսակցական ղեկավարին, մյուս կողմից՝ կողմերի միջև խոր տարաձայնություններ կային առաջիկա ընտրություններում թեկնածուների առաջադրման հարցում: Արդյունքում, Օ. Օզելը և նրա կողմնակիցները որոշեցին լքել կուսակցությունը՝ հիմնադրելով «Յենի» կուսակցությունը:

Այս քայլին հետևեց պատգամավորների, համայնքային ղեկավարների և տեղական կազմակերպությունների զանգվածային արտահոսք, միևնույն ժամանակ, ԹԱՄԺ-ում ուժերի հարաբերակցությունը արմատապես փոխվեց ի օգուտ «Յենի փարթիսի»-ի՝ ՀԺԿ-ին զրկելով գլխավոր ընդդիմադիր ուժի իրատեսական լծակներից: Մյուս կողմից, Ահմեդ Դավութօղլուի «Ապագայի կուսակցության» լուծարումը ակնհայտ դարձրեց 2023 թ. ձևավորված «Վեցյակի սեղան» ձևաչափի աջ-կենտրոնամետ, աջ-պահպանողական փոքր կուսակցությունների վերջնական քաղաքական սնանկությունը, և այն, որ խաղաղ ճանապարհով իշխանափոխության համար միայն ԱԶԿ-ից դուրս եկած գործիչների վրա հույս դնելու ռազմավարությունը չարդարացրեց իրեն:

Արդյո՞ք հետևելով Դավութօղլուի օրինակին՝ նման որոշում կկայացնի ԱԶԿ նախկին անդամ և ԱԳՆ նախկին ղեկավար Ալի Բաբաջանը, ով 2020 թ. հիմնել էր «Ժողովրդավարություն և առաջընթաց» կուսակցությունը (թուրք. հապավումը՝ DEVA), որը պետք է ձևավորեր այլընտրանք ԱԶԿ-ին: Դեռևս փակման մասին պաշտոնական որևէ հաղորդագրություն չկա, սակայն DEVA-ն հայտնվել է քաղաքական մարգինալացման եզրին: Եթե Ա. Բաբաջանի թիմին չհաջողվի մոտ ապագայում միավորվել «Յենի փարթիսի»-ի կամ որևէ այլ կենտրոնամետ դաշինքի հետ, ապա այն կվերածվի զուտ *«նշանավոր նախկիններից»* կազմված կուսակցության՝ չունենալով իրական ազդեցություն Թուրքիայի քաղաքական դաշտում:

Ինչևէ, «Յենի» կուսակցության ի հայտ գալն ու ՀԺԿ-ի ակնհայտ թուլացումը կարճաժամկետ հեռանկարում առաջին հերթին ձեռնտու է իշխող վարչակարգին, քանի որ ձայների փոշիացումը և ընդդիմադիր այս երկու խմբերի ներպայքարի վրա ուժերի վատնումը նվազեցնելու են ընդհանուր ճակատի արդյունավետությունը: Սակայն, եթե կուսակցությանը հաջողվի իր շուրջը համախմբել ինչպես կենտրոնամետ-ձախ, այնպես էլ Դավութօղլուի կուսակցության լուծարումից հետո «անտերունչ» մնացած չափավոր-պահպանողական ընտրազանգվածին, ապա, ըստ երևույթին, կարող է վերածվել ժամանակակից ազդեցիկ քաղաքական ուժի:

Նկատենք նաև, որ ՀԺԿ-ի պառակտումն ի դերև հանեց փորձագիտական շրջանակներում շրջանառվող այն թեզերը, որ թուրքական քաղաքական համակարգում ավանդական և կուսակցության կանոնադրության առումով կոշտ քաղաքական կառույցները կարող էին ճկուն արձագանքել արտաքին մարտահրավերներին՝ այս դեպքում՝ դատական-վարչական համակարգի ճնշումներին և ներքին բարեփոխումների պահանջարկին: Սակայն, ինչպես տեսնում ենք, դա չափազանց խիստ լավատեսական գնահատական էր, և, ելնելով վերջին զարգացումներից՝ կարելի է արձանագրել, որ ավանդական կուսակցությունները գնալով հայտնվում են խորը ճգնաժամում:

Այս ամենի հետ մեկտեղ, առաջիկայում Աթաթուրքի ժառանգության «սեփականատեր» լինելու համար պայքարը ևս դառնալու է այս երկու ուժերի գաղափարական հիմնական վեճերից մեկը: Ըստ էության, ՀԺԿ-ն իր ողջ քաղաքական էներգիան այսուհետ ուղղելու է ոչ թե ԱԶԿ-ի դեմ պայքարին, այլ «Յենի պարթիսի»-ի հետ վեճին՝ ապացուցելու համար, թե ով է Աթաթուրքի ժառանգության *«իսկական»* տերը:

Ինչ վերաբերում է ՀԺԿ-ի ապագային, ապա դատական վճիռների արդյունքում իր նախկին պաշտոնին վերականգնված Քըլըչդարօղլուն հնարավոր է ընտրի իշխող վարչակարգի հետ հարաբերությունները «կարգավորելու» և առճակատումից խուսափելու ուղին:

Կարծում ենք՝ իշխանությունն ի վերջո հենց այդ հաշվարկով էլ վերականգնեց ՀԺԿ-ի նախկին ղեկավար Քըլըչդարօղլուին իր նախկին պաշտոնին: Անձամբ Էրդողանի և, հատկապես, ԱԶԿ-ի համար չափազանց ձեռնտու է ունենալ թույլ, կանխատեսելի ՀԺԿ, որը, եթե նույնիսկ խորհրդարանում զբաղեցնի ընդդիմադիր աթոռների մի մասը, այնուհանդերձ, տարբեր տեսանկյուններից այն իրական վտանգ չի ներկայացնի իշխող կուսակցության համար:

Այնպես որ ՀԺԿ հնարավոր է ապագայում Թուրքիայի քաղաքական կյանքում այլևս օրակարգ ձևավորողի դերում չլինի, այլ ձգտի պահպանել գոնե սեփական գոյությունը: Ավելին՝ ՀԺԿ-ն մեծ ռիսկի է գնում տարեց տարի վերածվելու փոքր քաղաքական խմբակի, որի առաջնային նպատակը լինելու է գոնե խորհրդարանական շեմը հաղթահարելը: Հեղինակիս կողմից տեսական մակարդակում առաջ քաշած այս թեզերի պատասխանները կստանանք առաջիկա խորհրդարանական ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո:

Ինչևէ, նկատենք, որ միասնական գաղափարախոսական կենտրոնի բացակայությունը, մասնավորապես՝ աշխարհիկ, ազգայնական և սոցիալ-դեմոկրատական տարրերի միջև հավասարակշռության մշտական որոնումն ընդդիմադիր հարթակը ներքին բախումների համար դարձնում են խոցելի: Այս պայմաններում ընդդիմության հիմնական մարտահրավերը, կարծում ենք, հնարավոր ընտրական հաջողության դեպքում կայուն ինստիտուցիոնալ մոդել ստեղծելու անհրաժեշտությունն է, քանի որ, հին մոտեցումներն այլևս չեն երաշխավորում մեքենայորեն հասարակական աջակցություն:

ԱԶԿ-ի և անձամբ Ռ. Թ. Էրդողանի համար ՀԺԿ-ում տեղի ունեցած պառակտումն ու «Յենի» կուսակցության ձևավորումը **տակտիկական հաղթանակ է, սակայն պարունակում է նաև ստրատեգիական նոր ռիսկեր**: Նախ և առաջ՝ ՀԺԿ-ի պառակտմամբ Էրդողանի ավտորիտար ռեժիմի համար չեզոքանում է այն միակ միասնական ճակատը, որը 2023–2024 թթ. լուրջ սպառնալիք էր ներկայացնում նրանց համար: Ձայների փոշիացումը երկու կուսակցությունների միջև թույլ կտա վերջինիս հեշտությամբ պահպանել առաջատարի իր դիրքերը: Մյուս կողմից, քանի դեռ ընդդիմությունը զբաղված է ներքին «վիուկների որսով», դատական վեճերով և ռեսուրսների վերաբաժանմամբ, այն աներկբա կերպով թուլացնելու է հենց իր դիրքերը Ստամբուլում, Անկարայում և Իզմիրում՝ ճանապարհ հարթելով ԱԶԿ-ին «հետ վերցնելու» այդ ռազմավարական քաղաքները:

Նկատենք նաև, որ *«ծերացած»* և քեմալապաշտ ՀԺԿ-ն Էրդողանի քաղաքական խոսույթի և քննադատությունների համար հարմար «թիրախ» էր: Այժմ, սակայն, Օ. Օզելի և Է. Իմամօղլուի ստեղծած նոր կուսակցությունը չի կրում այն պատմական «բեռն», ինչ ՀԺԿ-ն, հետևաբար՝ կարող է ավելի արդյունավետ պայքարել ԱԶԿ-ի դեմ՝ գրավելով նաև չկողմնորոշված կամ դժգոհ աջակողմյան ընտրողներին: